

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Դասական թվականն արտահայտում է առարկայի թվային կարգը: Ինչպես արդի հայերենում, այնպես էլ բարբառներում դասական թվականները կազմվում են քանակականներից՝ ածանցներով, վերջավորություններով և քերականական այլ կառույցներով: Նախապես միևնույն լեզվում դասականը կազմվել է մեկից ավելի քերականական միջոցներով: Աստիճանաբար լեզուներն անցել են միօրինակության և դասական թվականի համար գործածել միևնույն մասնիկը կամ ածանցը: Նույնը տեղի է ունեցել հայերենում. արդի գրական հայերենում դասական թվականն աստիճանաբար սկսել է կազմվել -րորդ, -երորդ ածանցներով¹: Իսկ բարբառները, ինչպես վաղ, այնպես էլ արդի շրջանում, պահպանել են դասական թվականի՝ մեկից ավելի կազմություններ: Թեև կարելի է նաև նշել, որ բարբառներն էլ աստիճանաբար ձգտել և ձգտում են անցնել գրական տարբերակին՝ միաժամանակ պահպանելով հինը:

Հայերենի բարբառներում դասական թվականը կազմվում է հետևյալ միջոցներով.

1. -ում վերջավորությամբ,
2. վրա կապով,
3. թուրքական -ինցի ածանցով,
4. բազաթան քանակական թվականով,
5. -որորդ, -երորդ ածանցներով:

Բարբառների մի մասը դասականը կազմում է -ում վերջավորությամբ, որը դրվում է քանակական թվականի վրա:

-ում վերջավորության ծագման մասին Աճառյանը գրում է, որ առաջին հայացքից այն պարսկերեն դասականի -սո մասնիկն է: Բայց պարսկերենից այն կարող էին փոխ առնել Պարսկաստանին մոտ բարբառները, սակայն -ում վերջավորությունն ունեն նաև Պարսկաստանից հեռու գտնվող տարածքները: Ուստի Աճառյանն առաջադրում է այն տեսակետը, որ բարբառներում դասական թվականի -ում վերջավորությունը գրաբարի ներգոյական հոլովը կազմող տրականի -ում մասնիկն է: Գրաբարում դասական թվականները հոլովվելիս ներգոյականում ստանում են -ում վերջավորությունը՝ *ի վեցերորդում ամի*: Առևտրով զբաղվող լեհահայերը, հունգարահայերը և այլոք, չէին մոռացել այս ձևերը: Հետագայում, ինչպես հատուկ է լեզուներին, տեղի է ունեցել սղում, և -

¹ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, 1952, էջ 273-295:

երորդ, -որորդ ածանցները կրճատվել են՝ *վեցում*, որն էլ ձևավորվում է իբրև դասականի հատուկ ձև²:

Աճառյանը նշում է, որ -ում վերջավորությամբ դասական կազմում են **Նոր Զուղայի, Առդեալի, Ղրիմի և Նոր Նախիջևանի** բարբառները, և ներկայացնում դրանց համեմատական պատկերը.

Նոր Զուղա՝ *յերկըքում, շիրեքում, չորքում, խընգում, վեցում, օխտնում, ութնում, իննում, տասնում*.

Նոր Նախիջևան՝ *էրգուսում, իրեքում/ժեքում, չօրսում, հինգում, վեցում, օխտնում, ութնում, իննում, դասնում*³:

Առդեալ՝ *էրգուսում* (Սուլափա), *էրգուսումը* (Լեհաստան), *իրեքում* (Սչ.), *իրեքումը* (Լհ.), *չօրսում* (Սչ.), *չըրսում* (Լհ.), *հինգում* (Սչ.), *հինգումը* (Լհ.), *վեցում* (Սչ.), *վեցումը* (Լհ.), *օխտնում* (Սչ.), *օխտնումը* (Լհ.), *ութնում* (Սչ.), *ութնումը* (Լհ.), *իննում* (Սչ.), *իննումը* (Լհ.), *դասնում* (Սչ.), *դասնումը* (Լհ.)⁴:

Նոր Զուղայի բարբառում **երկու** թվականի դասականը կազմվել է *յերկուք* հիմքով: **Երեք** թվականը **Նոր Զուղայի** բարբառում ունի կոկորդային *ս* ծայնորդի հավելում՝ *շիրեք - շիրեքում*⁵: Զորս թվականը դրսևորվում է գրաբարյան *չորք* հիմքով՝ ր ծայնորդի անկումով: *Խինգ* թվականի ի-ն -ում վերջավորության հավելումով փոխվել է *ք-ի*:

Նոր Նախիջևանի բարբառում **երկու** թվականի դասականը կազմվել է գրաբարյան *երկուք* թվականի անորոշ հայցականի հիմքով՝ *երկուս>էրգուս-էրգուսում*: **Երեք** թվականը հանդես է գալիս *իրեքում* և *ժեքում* հնչյուփոխական տարբերակներով:

Առդեալի բարբառի **Սուլափայի և Լեհաստանի** խոսվածքների՝ -ում-ով դասականների կազմությունները միմյանցից հիմնականում տարբերվում են ը որոշիչ հոդի հավելումով: Լեհաստանի խոսվածքում *չօրս* թվականի *օ* ծայնավորը փոխվել է *ք-ի*՝ *չըրս*, որը գործածվում է նաև որպես բացարձակ թվական: Սուլափայի խոսվածքում ընկել է *օխտը* թվականի թույլ շնչեղ ծայնեղ *դ*-ն:

Վերը նշված երեք բարբառներում էլ *յոթ*, *ինը* և *տասը* թվականները պահպանել են գրաբարյան արմատական *Զ*-ն, որոնց համաբանությամբ ութ թվականի դասականում տեղի է ունեցել *Զ*-ի հավելում:

-Ում մասնիկով դասական թվականի կազմությունը «Նոր-Նախիջևանի ու Սուլափայի բարբառներում ընդհանուր ու սովորական գործածություն ունի, այստեղ Պարսկաստանում ընդհակառակը գործ է ածվում միմիայն "այս ինչերորդ

² Գր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, 1952, էջ 289-290:

³ Գր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, 1952, էջ 287-288:

⁴ Գր. Աճառյան, Զննություն Առտիլի բարբառի, 1953, էջ 150:

⁵ Գր. Աճառյան, Զննություն Նոր-Զուղայի բարբառի, Եր., 1940, էջ 55:

անգամ՝ նշանակութեամբ. օր. էս խնգումն ա օր գ'ուման ամ ու տանո չես լել-
նում. բայց կարելի չէ ասել խնգում տունը, այլ միայն խինգորոոո՞ տունը ևն»⁶:

Դաշքեսանի շրջանի Չովդար գյուղի խոսվածքում ևս դասական թվականը կազմվում է -ում վերջավորությամբ՝ *երկուսումը, իրեքումը, չորսումը, հինգումը, վեցումը, յօթումը, տասնումը*՝ ը հողի հավելումով (№ 65)⁷:

Արարատյան բարբառում դասական թվականները սակավ են գործածվում: Դասականի իմաստն արտահայտվում է կամ քանակական թվականով, կամ -ում վերջավորությամբ՝ *իրեքում, չորսում, հինգում//խինգում, իննում, տասնում* և այլն⁸:

Ինչպես վերը նշվել է, -ում վերջավորության հավելումով գրաբարյան կազմության -որդ, -երորդ ածանցները սղվում են՝ ի վեցերորդում<*վեցում*: Սակայն Հայդուրի բարբառում կարող է պահպանվել նաև -որդ>-*օրթ* ածանցը՝ *յըրգըրօրթըմը, յըրթօրթըմը, չօրսըմը, հըրեցըմը, վըրեցըմը, օխտըմը, տասըմը* (№ 134, 136)⁹: -Ում վերջավորության ու-ն վերածվում է *ը*-ի. շեշտահաջորդ վանկի ծայնավորը թուլանալով հնչում է *ը*:

-Ում-ով դասականները հիմնականում կիրառվում են դասառանցներո նշելու համար համար՝ *տըղեն երկըսումըն ա* (Գափլայի շրջան, Մարգիյան գյուղ-№ 325.), *չօրսըմըն ա սըվըրես* (№ 164-Հայդուր): Սակայն խոտրջուրի գավառի Միջին թաղ գյուղի խոսվածքում այս կազմությունը գործածվում է նաև «որերորդ անգամ» իմաստով՝ *չօյսում անքամ, իրեքում անքամ, հինգում դասարան* (№ 59):

Վրա կապը որոշ խոսվածքներում հարադրվում է -ում վերջավորությամբ դասականին: Այդպես է, օրինակ, Նոր Ջուղայի բարբառին պատկանող Գափլայի շրջանի Մարգիյան գյուղի խոսվածքում՝ *վըրա երկըսում, վըրա շիրեքում, վըրա չօրսում, վըրա հընգում, վըրա վեցում, վըրա օխտում* (№ 325), և Լոռու բարբառի Սանահինի և Թեղուտի խոսվածքներում՝ *վըրա երկուսումը, վըրա յիրեքումը, վըրա չորսումը, վըրա վեցումը, վըրա օխտումը, վըրա տասնումը, վըրա քըսանումը*՝ ը հողի հավելումով (№ 134, 136):

Սակայն վրա կապը հիմնականում կապակցվում է քանակական թվականի թեք հոլովածներին: Եթե ժամանակակից հայերենում վրա կապը ետադրություն է, ապա բարբառներում՝ դասականի կազմության մեջ, նախադրություն է:

⁶ Դր. Աճառյան, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Եր., 1940, էջ 214-215:

⁷ Օրինակները բերված են Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված ենթախոսվածքներից: Վերջինները նշել ենք տեղանվամբ և տեսրի համարով:

⁸ Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 126:

⁹ Ա. Պողոսյան, Հայդուրի բարբառը, Եր., 1965, էջ 131:

Քանակական թվականի տրական հոլովի և վրա>վըրա կապի հարադրությամբ դասական են կազմում Փերիայի գավառի Յազարքիի գյուղի և Չալմահալի շրջանի Աղբուլաղ գյուղի խոսվածքները՝ *վըրա երկըսին, վըրա շիրեքին, վըրա չորսին, վըրա վեցին, վըրա օխտին, վըրա ութին* (№ 372, 374), Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղի խոսվածքը (երգրումի գաղթականություն)՝ *վըրա երգուսին, վըրա չորսին, վըրա վեցին* (№ 193), Ալաշկերտի խոսվածքը՝ *վըրա իրեկին, վըրա չոռսին, վըրա յօտին*¹⁰, Մշո գավառի Դուզնուկ գյուղի խոսվածքը՝ *վըրա չորսին, վըրա խինգին* (№ 141): Իսկ Կարսի շրջանի Փալդրվան գյուղի խոսվածքում *վըրա* կապը հարադրվում է բացարձակ թվականի ուղիղ ձևին՝ *վըրա չիրեկ օրը, վըրա չօրս տարուն, վըրա ինը երեխեն* (№ 29^ա):

Մշո բարբառում *վրա* կապը արտաբերվում է *վըր* հնչյունափոխությամբ, որը, թվականի տրական հոլովին կապակցվելով, գործառում է «որերորդ անգամ» նշանակությամբ՝ *վըր իրեքին օր տեսա ...*՝ «երրորդ անգամ որ տեսա ...», *վըր չորսին օր եգավ ...*՝ «չորրորդ անգամ որ եկավ...», իսկ հայցական հոլովի հարադրությամբ՝ *վըր չօրսըն օր եգավ...*՝ «չորրորդ որ եկավ...»՝ ենթակայի, *վըր իրեքըն օր տեսա...*՝ «երրորդ որ տեսա...»՝ ուղիղ խնդրի իմաստներով¹¹:

Կարսի գավառի Կաղզվան քաղաքի խոսվածքում դասական թվականն արտահայտվում է հետևյալ կազմությամբ՝ *տաս ավուր վըրեն էկավ*՝ տասներորդ օրը եկավ, այսինքն՝ այստեղ *վրա* կապը ետադրություն է և դրվել է թվականից ու նրա լրացումից հետո (№ 406):

Բարբառների մի մեծ խումբ դասական թվականը կազմում է *-ինքի* փոխադրալ ածանցով, որը թուրքերեն կամ ադրբեջաներեն ույյու դասականի ածանցն է: «Ադրբեջաներեն ույյու, թրք. ոյյու մասնիկի ծագումը պետք է անշուշտ կապել մանջուրերեն չի մասնիկի հետ, որ կազմում է դասական»¹²:

Ինքի ածանցը հանդես է գալիս *ինքը, ընքը, ընքա, անքա, անքի, ունքում/ունքո, անքը, ինքի, մընքի, հիմքի. ընքի* հնչյունական տարբերակներով:

Արևմտյան խմբակցության բարբառները կամ չունեն դասականի հատուկ կազմություն, կամ կազմում են նույն թուրքական *ինքի* ածանցով:

Քեսաբի բարբառում դասականը կազմվում է *-ինքը* ածանցով՝ *իքինքը, ուչինքը, չուկկինքը, հե՛նգինքը, վիցինքը, յօթինքը* և այլն (№ 1): Իսկ Սվեդիայի բարբառում՝ *ընքա/ունքը* հնչյունական տարբերակով՝ *իկընքը, ու՛նքնքա/ը,*

¹⁰ Զ. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Եր., 1985, էջ 89:

¹¹ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Եր., 1958, էջ 94:

¹² Զր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Եր., 1952, էջ 291:

չուկընջաւը, փծընջաւը, հանգինջաւը, յուտընջաւը, դոււընջաւը, քըսուընջաւը (№ 280): Բեսարի և Ավեդիայի բարբառներում եռեռոռո և եռորոռո դասականները կազմվել են թուրքերենից փոխ առնված թվականներով: Մինչդեռ Բեյլամի և Կեսարիայի բարբառներում, Ձեյթունի Ֆուռնուս (Ուլմիա) գյուղաքաղաքի խոսվածքում դասականն արտահայտվում է թուրքերեն թվականներով, որոնց կցվում են հնքի ածանցի մաս ունքու, ընքի, մինքի հնչյունական տարբերակները՝ իքինքիլ/ուքունքու (Ձեյթուն)՝ երկրորդ, ուլունքու՝ երրորդ, դօրդունքու՝ չորրորդ, բէշինքի՝ հինգերորդ, ալթընքի՝ վեցերորդ, յէդինքի՝ յոթերորդ, օնունքու՝ տասներորդ, յիքմինքի՝ քսաներորդ (№ 459, 295)¹³:

Ռոդոսթոյի խոսվածքում միայն եռկրորո դասական թվականն է կազմվում թուրքերեն արմատով՝ իքինքի, իրէքինքի, չօրսինքի, հինգինքի, վեցինքի, օխտինքի, դասնինքի, քըսանինքի (№ 192):

Սասունի բարբառում դասականների համար կիրառվում է ընքի հնչյունական տարբերակը՝ երգուընքի, իրէկընքի, չօրսընքի, հինգընքի (Սասուն, Արփի գյուղ - № 192): Երկու թվականի դասականը կազմվում է մաս երգու քրաբարյան հիմքով՝ երկուընքի, իրիքընքի, չուրսընքի, հինգընքի և այլն¹⁴:

Նոր Նախիջևանի բարբառում գործածվում է իմքիլ/ընքի ածանցը, որը կցվում է հայերեն արմատներին՝ երկուիմքի, չօրսիմքի, վեցիմքի, տասնիմքի (№ 14, 411), չօրսընքի, օխտընքի, տասընքի, քըսանընքի (№ 228):

Ագուլիսի բարբառում դասականի ածանցն է մընքի, որից առաջ թվականները չեն հնչյունափոխվում¹⁵: արկումընքի, իրիքմընքի, չուրքմընքի, հանգմընքի, վիցմընքի, էխտմընքի, օթմընքի (№ 22):

Աի հավելումով մընքիլ/մընքի ածանցով դասական է կազմում մաս Կարճևանի բարբառը՝ յօրկումընքի, իրիքմինքի, չըքմընքի, հինգմընքի, վիցմընքի, յօխտընքի, տըսընքի¹⁶: Չորս>չօք թվականի օ ծայնավորը մընքի ածանցից առաջ փոխվում է ը-ի: Տասը թվականի ա-ն, շեշտից գրկվելով, ևս փոխվում է ը-ի¹⁷: Պահպանվում է յոթ և տասը թվականների գրաբարյան որոշյալ ն>ը հոդը:

Ղարաբաղի Սարդու և Վաղուհաս, Ղարաղաղի Խանազահ և Ուրգութուն գյուղերի խոսվածքներում մընքի ածանցից առաջ թվականները փոփոխություն չեն կրում (№ 100, 49^o, 71, 53, 181):

¹³ Ս. Անթոյան, Կեսարիայի բարբառը, Եր., 1961, էջ 80:

¹⁴ Ս. Պետոյան, Սասունի բարբառը, Եր., 1954, էջ 39:

¹⁵ Զր. Աճառյան, Բնություն Ագուլիսի բարբառի, Եր., 1935, էջ 227:

¹⁶ Զ. Սուրադյան, Կարճևանի բարբառը, Եր., 1960, էջ 109:

¹⁷ Զ. Սուրադյան, Կարճևանի բարբառը, Եր., 1960, էջ 23:

Մարտակերտի և Ստեփանակերտի մեծ մասում *երկու* թվականին կցվող *ինքնիլոմքի* ածանցների *ի* ծայնավորն ընկնում է նախորդ *ու* ծայնավորի պատճառով՝ *երկուների, տըսներկունքի*¹⁸։ Վերջահանգ *ու-ն* կարող է նաև պահպանվել՝ *երկուների* (№ 127, 389)։ Ղարաբաղի բարբառում կիրառվում է նաև *հ* խուլ շիականի հավելումով *հինքի* վերջածանցը, որի դեպքում ևս *երկու>երկու* թվականի *ու-ն* պահպանվում է, երկու ծայնավորներն իրար կից չլինելով՝ անկում տեղի չի ունենում¹⁹։ *երկուհինքի, իրեքիների, չօրսիների, հեղգիների* (№ 54, 209)։

Ղաշքեսանի շրջանի Բանանց գյուղի խոսվածքում դասականը կազմվում է *ինքի* կամ *հինքի* ածանցներով՝ *երկուհիների, չօրս(ի)ների, վեց(ի)ների, իրեք(ի)ների, հինգ(ի)ների, յոթ(ի)ների//օխտըհիների, տասըհիների, քըսան(ի)ների*, ինչպես երևում է, այն թվականները, որոնք ունենք վերջնահանգ ծայնավոր, կազմվել են միայն *հինքի* ածանցով՝ *երկուհիների*, եւթն և տասն թվականները պահպանել են զրաբարյան որոշիչ հոդը՝ *ն>ը*, որի հետևանքով էլ նույնպես ստացել են *հ* հավելահնչյունով տարբերակը՝ *օխտըհիների, տասըհիների*։ Իսկ մյուս թվականներին կարող են կցվել և *ինքի*, և *հինքի* տարբերակները։

Սեղրու բարբառում դասականը կազմվում է *-մքի, -ոմքի* և *-ի՛մքի* ածանցներով։ *-Սքի-ն* կցվում է *երկու* թվականին՝ *երկումքի*։ *-Ըմքի-ն* կցվում է բաղաձայնահանգ թվականներին՝ *չուրքըմքի, վըցըմքի, օխտըմքի, օթըմքի, ինըմքի, տաճըմքի, -ի՛մքի* ածանցը՝ *գ՛* և *թ՛* ըմային բաղաձայններով վերջացող թվականներին՝ *իրիքի՛մքի, հինգի՛մքի*²⁰։ *Վը՛ց* թվականի *ը՛* երկբարբառն *-ըմքի* ածանցից առաջ փոխվում է *ը-ի*։ *երկումքի* և *չուրքըմքի* դասականներին զուգահեռ կան նաև *երկըմքի* և *չըրքըմքի* ձևերը։ Առաջինն ավելի գործածական է, քան երկրորդը։ Վերջինիս *ու-ն* փոխվել է *ը-ի՛* ըստ ծայնավորների ներդաշնակության օրենքի²¹։ Կիրառելի է նաև *մ* ծայնեղի հավելումով *-մընքի//մի՛նքի* ածանցները՝ *երկումընքի, իրիքմի՛նքի, չուրքմընքի* և այլն։

Իսկ Կարճևանի բարբառը գործառու է միայն *-մընքի//մի՛նքի* հնչյունական տարբերակները՝ առաջինը ծանր, երկրորդը՝ թեթև ծայնավորներից հետո՝ *յօրկումընքի, իրիքմի՛նքի, չըքմընքի, հանգմընքի//հինգմի՛նքի, վիցմի՛նքի, յօխտըմընքի, օթըմընքի, ինըմի՛նքի, տըսըմընքի*²²։ *Չօրք* և *տասը* թվականների

¹⁸ Կ. Ղավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, 1966, էջ 125-126։

¹⁹ Կ. Ղավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, 1966, էջ 126։

²⁰ Է. Աղայան, Սեղրու բարբառը, Եր., 1954, էջ 178։

²¹ Է. Աղայան, Սեղրու բարբառը, Եր., 1954, էջ 52։

²² Զ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Եր., 1960, էջ 109։

օ և ա ծայնավորները ածանցից առաջ, շեշտից զրկվելով, փոխվում են Ը-ի, իսկ օթ թվականը ստանում է Զ որոշիչ հոդը:

Մարաղայի բարբառում դասականները կազմվում են հմջի, ըմջո, ումջո ածանցներով: Իմջի ածանցը կցվում է այն թվականներին, որոնց շեշտված ծայնավորն է փ (ա և է ծայնավորների միջին աստիճան) կամ ի՝ իրիքիմջի, խիմգիմջի, վիցիմջի, իննիմջի, խարիիմջի: -Ըմջը-ն կցվում է ա շեշտված ծայնավոր ունեցող թվականներին՝ տամըմջը, քմանըմջը, իսկ ումջը տարբերակը կցվում է այն դեպքում, որտեղ ու-ն է շեշտված ծայնավորը՝ երկոււմջը|| երկուսըմջը, ութոււմջը, վացոււնումջը:

Բացի վերը նշված հմջի ածանցի իմջի, ըմջը, ումջու հնչյունական տարբերակներից Մարաղայի բարբառում դասականի կազմության համար գործառույն են նաև հմհմջի, միմջի, ոււմմջո, ըմմջո, մըմջո ձևերը: Իմիմջի և միմջի ածանցները կցվում են շեշտված ի ծայնավոր ունեցող թվականներին, ոււմմջը՝ շեշտված ու ծայնավոր ունեցողներին, ըմմջը՝ շեշտված ա ծայնավոր ունեցողներին, իսկ մըմջը՝ և ա, և ու ծայնավորներ ունեցողներին՝ իրիքիմիմջի||իրիքմիմջի, չուրսումմջը||չուրսմմջը, խիմգիմիմջի||խիմգմիմջի, ութումմջը||ութմմջը, իննիմիմջի||իննպմիմջի, տամամմջը||տասմմջը, քմանմմջը||քմամմջը, քառսումմջը||քառսմմջը և այլն²³:

Բաղաձայնահանգ թվականները դասականի ածանցից առաջ չեն հնչյունափոխվում, իսկ ծայնավորով վերջացողները, զրկվում են վերջին ծայնավորից և կցվելով բաղաձայնով սկսվող ածանցին՝ կամ կորցնում են վերջին բաղաձայնը, կամ վերականգնվում է վերջահանգ ծայնավորը՝ ութմըմջը, իննամիմջի, տամամըմջը, տասմըմջը²⁴: Երկու թվականի դասականը կազմվում է հիմքային երկու տարբերակով՝ երկու և երկուս երկոււմջը||երկուսըմջը:

-Ինջի թվականակերտ ածանցով դասական թվական կազմում են նաև **Գորիսի**²⁵, **Բուրղուրի** (-ինջի||-ընջի)²⁶, **Շամախի** (-ինջի||-ընջի||-նջի)²⁷ բարբառները, **Սիսիանի** (-ինջի) (№ 115, 435) և **Իջևանի** (-ընջի) (№ 201) խոսվածքները:

Որոշ բարբառներում թուրքերեն թվականները կիրառվում են ինչ-որ բանի որակը, տեսակը նշելու համար: Այսպես, օրինակ, **Համշենի** բարբառում ծխախոտի որակավորման համար գործածում են «բիրիմջի, իքիմջի, իւչիմջի,

²³ Դր. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Եր., 1926, էջ 186-187:

²⁴ Դր. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Եր., 1926, էջ 187:

²⁵ Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 157:

²⁶ Ա. Մկրտչյան, Բուրղուրի բարբառը, Եր., 1971, էջ 105:

²⁷ Ռ. Բաղդամյան, Շամախի բարբառը, Եր., 1964, էջ 102:

դեռիմքի «առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ» ձևերը»²⁸։ Վանի բարբառում «թրք. բիրիմքի «առաջին» բառը գործածվում է «առաջնակարգ, գերազանց» իմաստով»²⁹։ Այդպես է նաև Պոլսի միջբարբառի Օրդուի խոսվածքում՝ բիրիմքի՝ առաջին տեսակի, *իքիմքի*՝ երկրորդ տեսակի (№ 94)։

Դասական թվականը յուրահատուկ դրսևորում ունի Գաճընի բարբառում. մինչև տարբ թվականի դասականը կազմվում է *իմքի* ածանցով (երկու և երեք թվականները՝ թուրքերեն արմատներով՝ *իքիմքի, ուչիմքի*), իսկ տասից հետո ավելացվում է *դաբօ* (անգամ)³⁰ բառը՝ *դասնըհիմգ դաբօ*։ «Շատ դեպքում ամեն մի դասական թվական «դաբօ» բառի ավելացմամբ»³¹։

Կան մի խումբ բարբառներ, որոնք չունեն դասական թվականի կազմության հատուկ ձև։ Այդ դեպքում այն արտահայտվում է բացարձակ թվականի ուղիղ կամ թեք հոլովածներով (նկարագրական եղանակ)։

Բազարձակ քանակական թվականով դասական թվականի արտահայտման միջոցը կիրառում են Արարատյան, Գամշենի, Սասունի, Մշո, Վանի, Ակնի, Խոյի, Գաղուրթի բարբառները, Սպիտակի ու Եղվարդի խոսվածքները։

Առառատան- Կարօյի մենծ տըղեն սըվօրավ մինչևլ օխտը (յոթերորդը), պստիկըն էլ ութից (ութերորդից) գճնաց արեստի³²։

Գամշեն- Յես ունիմ վէց դղա, հինգին (հինգերորդին) չիմ սիրէլ, ամա վէցին (վեցերորդին) շատ սիրիմ գու³³։

Ասսուն- Եղավ իրեք (երրորդ) գընիգ գենը (№ 121)։

Մուշ- Զորս (չորրորդ) դասարան կառտըծեր իմ (№ 42)։ Իմ չոռս (չորրորդ) տըղեն (№ 263)։

Վան- Մանըկու լամ չորս (չորրորդ) տասարուն կըկանրտա (№ 30)։

Ակն- Զորս (չորրորդ) դ՛ասարան (№ 4)։

Խոյ- Երկու (երկրորդ) կընիկ, իրեք (երրորդ) տըղա (№ 11)։

Գաղուրթ- Ըրամեն օխտամ տասըն քիցալ (Արամին յոթերորդից դուրս են արել)³⁴։

Սպիտակ- Նըստած են հինգ (հինգերորդ) շարկը (№ 434)։

Եղվարդ- Մինչևլ չոռս (չորրորդ) խումբ ա սօվօրտ։ Ես էլ հինգ (հինգերորդ) հետ ա, Երեվան են եքըմ (№ 86)։

²⁸ Զր. Աճառյան, Զննություն Գամշենի բարբառի, Եր., 1947, էջ 109.

²⁹ Զր. Աճառյան, Զննություն Վանի բարբառի, Եր., 1952, էջ 148:

³⁰ Գայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Եր., 2001, էջ 296:

³¹ Գ. Գասպարյան, Գաջընի բարբառը, Եր., 1966, էջ 84:

³² Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 126:

³³ Զր. Աճառյան, Զննություն Գամշենի բարբառի, Եր., 1947, էջ 109:

³⁴ Ա. Պողոսյան, Գաղուրթի բարբառը, Եր., 1965, էջ 131:

Ախալքալաքի շրջանի Օլավերդ գյուղի խոսվածքում դասական թվականն արտահայտվում է հետևյալ կառույցով՝ *երկուսեն պրգտիկը* = 3-րդ, *իրեքեն պրգտիկը* = 4-րդ, *չօրսեն պրգտիկը* = 5-րդ (№ 120): Արտահայտման նույն միջոցը կիրառվում է նաև Փերիայի շրջանի Ազնավուլ գյուղի խոսվածքում՝ *երկրսից պրստիկ ըրէխան* (№ 349):

Հայերենի բոլոր բարբառներն ունեն մեկ թվականի դասականի առաջին ձևը՝ իր հնչյունական տարբերակներով՝ *առաչին/հատաչի* (Արարատյան), *այչի*, *արաչու* (Օրդու), *եռչինեզ* (Ռոդոսթո), *առչինը* (Աղդեալ), *արծը/արծայն* (Սվեդիա), *եռչի* (Տիգրանակերտ), *եռչին* (Սասուն), *արչի* (Եդեսիա), *առչի(ն)/առծի(ն)* (Զեթուն), *ըռըչկի*, *ըռչի* (Ազուլխի), *ըռաչին (իրչի)*, *ըռըչի*, *առաչին* (Ղարաբաղ), *ըռըչին* (Հաղորութ), *առեչի* (Փերիա), *առաչի/ըռաչի* (Լոռի), *ըրչինակ*, *ըռչեվի* (Շամախի), *խառչի* (Կարին), *եռչին* (Բուրդուր) և այլն:

Մեղրու բարբառում հաճախ առաջին բառի փոխարեն գործածվում է աղբբեջաներեն *ավալիմքի*³⁵, Նոր-Ջուղայի բարբառում՝ *ավվալիմ*³⁶ դասականի ձևերը: Գորիսի, Շամախիի, Բուրդուրի և Ղարաբաղի բարբառներում -ինքի թվականակերտ ածանցը կարող է կցվել մեկ բացարձակ թվականին՝ *մընհնքի/միհնքի* (Գորիս³⁷, Շամախի³⁸, Բուրդուր³⁹), *մեկինքի*, *մեկիմքի*, *միհնքի*⁴⁰: Ղարաբաղի բարբառում -ինքի ածանցը կցվում է նաև առաջին բառին, որի *-ին* վերջածանցը սղվում է՝ *ըռաչինքի*, *առաչինքի*⁴¹:

Ինչպես վերը նշվել է, բոլոր բարբառները արդի շրջանում ձգտում են կիրառել դասականի կազմության գրական տարբերակը՝ -րորդ, -երորդ ածանցները, իհարկե, վերջիններս, իրենց բնորոշ հնչյունական փոփոխություններով:

Այսպիսով՝ հայերեն բարբառների մեծ մասը դասական թվականը կազմում է թուրքերեն *-ինքի* ածանցով: Գրաբարյան տրականի *-ում* վերջավորությամբ և *բազարծակ* *թվականով*, այսինքն՝ նկարագրական եղանակով, դասական թվականի կազմությունները ևս մեծ տարածում ունեն, իսկ *վոռ* կապով դասականները ունեն սակավ կիրառություն:

³⁵ Է. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 178:

³⁶ Հր. Ամառյան, Բնություն Նոր-Ջուղայի բարբառի, Եր., 1940, էջ 209:

³⁷ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 157:

³⁸ Ռ. Բաղդասյան, Շամախիի բարբառը, Եր., 1964, էջ 102:

³⁹ Ն. Սկրտչյան, Բուրդուրի բարբառը, Եր., 1971, էջ 105:

⁴⁰ Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, 1966, էջ 125, 315:

⁴¹ Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, 1966, էջ 125, 315: